

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱԹԵՍԱՏԻԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Ալեք Մանուկյան 1, Երևան 375049, Հայաստանի Հանրապետություն
հեռ. 597196

ՏԵՂԵԿԱԹԵՐՁ 5 (սեպտեմբեր 1992 թ.)

Ամառվա արձակուրդներից հետո ՀՄՄ վերսկսում է իր աշխատանքը: Միության բոլոր անդամները հրավիրվում են ակտիվ աջակցելու Միության գործունեությանը: Տեղեկատվական նյութերը ժամանակին Միության անդամներին հասցնելու համար հատկապես տեխնիկական միջոցների (համակարգիչ, բարորու) մեջ կարիք է զգացվում:

ԳԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԸ Հունիսի 23-ին Խորհրդի 6-րդ նիստում որոշվեց հիմնադրել մրցանակներ ՀՄՄ երիտասարդ գիտնականների լավագույն աշխատանքի համար և կազմվեց կանոնադրությունը նախապատրաստող համապատասխան հանձնախումբ: Խորհրդի անդամները ԲՈՒՀերում ավարտական և ընդունելության քննությունների ընթացքի վերաբերյալ փոխանակվեցին մտքերով; խոսվեց նաև Միության ապագա անելիքների մասին:

ԳՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Հոկտեմբերի 6-ին (Երեքշաբթի), ժ.17.00 տեղի կունենա ՀՄՄ Խորհրդի նիստ հետևյալ օրակարգով. ա) ՀՄՄ կողմից սահմանվող մրցանակների կանոնադրության քննարկում; բ) դպրոցներում մաթեմատիկային հատկացված ժամերի քանակի շուրջը քննարկում գ) Միության անդամների արտասահմանում թարգմանված աշխատանքների հոնորարժերը փրկելու ուղիների որոշում; դ) կազմակերպչական հարցեր:

*Նույն օրը ժ.18.00 նշանակված է ՀՄՄ ընդհանուր գիտական նիստ: Զեկուցող՝ դրույտ. Բորիս Նահապետյան (մաթեմատիկայի ինստիտուտ)

ԳԻՐՍՅԱՆ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԴԱՇՏԵՐ ՎԻճԱԿԱԳՐԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅՈՒՄ

Հրավիրվում են ՀՄՄ բոլոր անդամները:

ԳԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԸ Հիշեցնում ենք, որ այս տարվա փոքրագույն մուժումն է 50n (գումարած 25n մուտքի համար, եթե չի մուժված): ՀՄՄ անդամների հարմարության նպատակով տարբեր հաստատություններում կնշանակվեն ներկայացուցիչներ, որոնց միջոցով ինարավոր կլինի լուծել ՀՄՄ հետ առնչվող բոլոր հարցերը, ներառյալ անդամավճարները և նամակագրությունը: Անհատ անդամները և բոլոր ցանկացողները կարող են անջուշտ դիմել անմիջապես ՀՄՄ ատենապետին կամ ընդհանուր նիստի ժամանակ): Ֆիզիանսական դվարությունների պատճառով "Տեղեկաթերթի" սույն համարը ուղարկվում է միայն պարտքերը մարած ՀՄՄ անդամներին:

*Նարուսակվում է հայ մաթեմատիկոսների տվյալների բանկի ստեղծման նպատակով բաժանված հարցաթերթիկների ետ ընդունումը: Խնդրվում է բոլորին լրացված թերթիկները վերադարձնել ՀՄՄ գրասենյակ:

ԳՀԱԿԵԼԿԱԾ Այս համարում շարունակում ենք հրապարակել ՀՄՄ դիմող և Խորհրդի կողմից հաստատված անդամների ցուցակը (ըստ ներկայացված դիմումների ժամկետի): Տվյալների փոփոխությունների դեպքում խնդրում ենք տեղեկացնել Միության գրասենյակ: